ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՓԱՐՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպի համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Փարպի, (0232)64303 parpi.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 20

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՓԱՐՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 20.07.2016 ԹՎԱԿԱՆԻ <<ՓԱՐՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 21 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Արագածոտնի մարզպետի 2018թվականի հուլիսի 18-ի թիվ 80 կարգադրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Փարպի համայնքի ղեկավարի 20.07.2016թվականի <<Փարպի համայնքի համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման նոր հանձնաժողովի կազմը հաստատելու մասին>> թիվ 21 որոշման մեջ՝

1. <<Տիգրանուհի Հովսեփյան-ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության առաջատար մասնագետ>> բառերը փոխարինել <<Գարեգին Ոսկանյան-ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական>> բառերով:

2. <<Հովհաննես Ասատրյան-ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար>> բառերը փոխարինել <<Հովհաննես Ասատրյան-ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական

ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ>> բառերով:

3.<<Սիրազնիկ Հովսեփյան-ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական>> բառերը փոխարինել <<Սիրազնիկ Հովսեփյան-ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական>> բառերով:

Համայնքի ղեկավար՝ ԻՇԽԱՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ